

ՀԱՆԳԻՍՏ
ՏԻԱՐ ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏՉԻ ՔԵՀՅԱՅԱՆԻ

1990 թվականի նոյեմբերի 10-ին, երկարատև հիվանդությունից հետո, իր մահկանացուն կնքեց Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական բաժնի վարիչ տիար Գառնիկ Մկրտչի Քեհյայանը:



Գառնիկ Քեհյայանը ծնվել է 1906 թվականին Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիայում: Հայրը՝ Մկրտիչ Քեհյայանը, ծառայել է օսմանյան բանակում որպես ավագ հաշվապահ: Մեծ հայրը մասնագիտությամբ փաստաբան էր:

1915—1918 թվականներին տեղափոխվում և բնակվում են Թուրքիայի Ուշաք քաղաքում: Պատերազմը վերջանալուց հետո ընտանիքով տեղափոխվում են Կիլիկիայի Մերսին քաղաք, որտեղ Գառնիկ Քեհյայանը սովորում է հայկական դպրոցում:

1920 թվականին, ֆրանսիացիների Կիլիկիայից դուրս գալուց հետո, Քեհյայանների ընտանիքը ստիպված կրկին վերադառնում է Ուշաք: Ուշաքում հայկական դպրոց չլինելու պատճառով, Գառնիկ Քեհյայանը մեկնում է Զմյուռնիա (Իզմիր) և ուսումը շարունակում տեղի Պոյաճյան վարժարանում:

1922 թվականին, հույն-թուրքական պատերազմի ժամանակ, կորցնում է հորը և բազմաթիվ այլ գաղթականների հետ ապաստան գտնում Հունաստանի Փերիա քաղաքում: Այստեղ հաճախում է ֆրանսիական քոլեջ և ստանում հաշվապահական ու առևտրական բարձրագույն կրթություն: Քոլեջն ավարտում է գերազանց գնահատականներով:

1926 թվականից աշխատանքի է անցնում առևտրական զանազան ձեռնարկություններում՝ որպես գլխավոր հաշվապահ, գլխավոր ապրանքագետ՝ մինչև 1946 թվականը:

1946 թվականին ներգաղթում է հայրենիք՝ Հայաստան, և բնակություն հաստատում Երևանում: Աշխատանքի է անցնում Պետհրատում որպես ավագ հաշվապահ:

1955 թվականից աշխատանքի է անցնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում որպես գլխավոր հաշվապահ:

Ազնիվ ու անսակարկ նվիրյալ աշխատանքում արժանացել է Վեհափառ Հայրապետի բարձր գնահատանքին և պաշտոնակիցների սիրույն:

Հանգուցյալի դին ամփոփվեց Երևանի գերեզմանատանը:

«Յաւիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը վշտակցում է հանգուցյալի հարազատներին: